

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրին միանալու մասին

Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը և Ռուսաստանի Դաշնությունը, մի կողմից և Հայաստանի Հանրապետությունը, մյուս կողմից, այսուհետև՝ Կողմեր,

վերահաստատելով Կողմերին և նրանց ժողովրդներին կապող բարեկամական հարաբերությունները և նրանց բարգավաճման ապահովմանն ուղղված ձգտումները,

վճռական լինելով՝ նոր խթան հաղորդելու առավել սերտ ինտեգրման զարգացմանը և ժողովրդների սոցիալական առաջընթացի ու բարեկեցության բարելավման նպատակով Կողմերի տնտեսությունների մոտեցմանը,

վերահաստատելով իրենց շահագրգռվածությունը Եվրասիական ինտեգրացիոն գործընթացի զարգացման գործում,

առաջնորդվելով 2013 թվականի հոկտեմբերի 24-ի՝ Եվրասիական ինտեգրացիոն գործընթացին Հայաստանի Հանրապետության մասնակցության մասին Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության և Հայաստանի Հանրապետության ղեկավարների հայտարարությամբ,

նկատի առնելով, որ այն միջազգային պայմանագրերը, որոնց հիման վրա իրականացվել է Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորումը, դարձել են Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի հիմքը, արձանագրելով Հայաստանի Հանրապետության՝ նշված միջազգային պայմանագրերով նախատեսված պարտավորությունները կատարելուն պատրաստ լինելը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կողմից Մաքսային միությանը և Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքին Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունը միանում է Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրին, ինչպես նաև Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի իրավապայմանագրային բազայի ձևավորման շրջանակներում կնքված և Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին՝ սույն Պայմանագրի 1-ին Հավելվածով սահմանված ցանկին

համապատասխան, և սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից դառնում է Եվրասիական տնտեսական միության անդամ:

Հայաստանի Հանրապետության միանալու կապակցությամբ Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրում և սույն Պայմանագրի 1-ին Հավելվածում նշված միջազգային պայմանագրերում կատարվում են փոփոխություններ՝ համաձայն սույն Պայմանագրի 2-րդ Հավելվածի:

Հայաստանի Հանրապետության կողմից Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրի և սույն Պայմանագրի 1-ին Հավելվածով նախատեսված այլ միջազգային պայմանագրերի առանձին նորմերի կիրառումը իրականացվում է սույն Պայմանագրի 3-րդ Հավելվածով նախատեսված անցումային դրույթներին համապատասխան և հաշվի առնելով սույն Պայմանագրի 4-րդ Հավելվածով սահմանված ապրանքների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագների կիրառման վերաբերյալ պայմանավորվածությունները:

Եթե մինչև սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելը, ստորագրվի կամ ուժի մեջ մտնի Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված՝ Մաքսային միության և Միասնական տնտեսական տարածքի գործելու հետ կապված հարցերով միջազգային պայմանագիր, որը նշված չէ սույն Պայմանագրի 1-ին Հավելվածում, Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է պարտավորություն միանալու այդ միջազգային պայմանագրին առանձին արձանագրությամբ այդ միջազգային պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին, բայց ոչ շուտ, քան սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահը:

Հոդված 2

Սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից Եվրասիական տնտեսական միության մարմինների ակտերը, ինչպես նաև Բարձրագույն Եվրասիական տնտեսական խորհրդի (Եվրասիական տնտեսական ընկերակցության Միջպետական խորհրդի (Մաքսային միության բարձրագույն մարմնի)) որոշումները, Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (Մաքսային միության Հանձնաժողովի) որոշումները, որոնք գործում են սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահին, ենթակա են կիրառման Հայաստանի Հանրապետության տարածքում՝ հաշվի առնելով սույն Պայմանագրի 3-րդ Հավելվածով սահմանված դրույթները:

Հոդված 3

Առևտրի համաշխարհային կազմակերպությանը Հայաստանի Հանրապետության անդամակցության հետ կապված հարցերի կարգավորման վերաբերյալ դրույթները սահմանված են սույն Պայմանագրի 3-րդ Հավելվածով:

Հոդված 4

Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքը, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք, ներառյալ Հայաստանի Հանրապետության տարածքը, Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք չհանդիսացող տարածքով ապրանքների և տրանսպորտային միջոցների փոխադրման առանձնահատկությունները սահմանվում են սույն Պայմանագրի 5-րդ Հավելվածով:

Հոդված 5

Սույն Պայմանագրի դրույթների կիրառման և (կամ) մեկնաբանման հետ կապված վեճերը լուծվում են Եվրասիական տնտեսական միության մասին 2014թ. մայիսի 29-ի Պայմանագրի 112-րդ հոդվածին համապատասխան:

Հոդված 6

Սույն Պայմանագիրը մտնում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մեջ:

Սույն Պայմանագիրը ենթակա է վավերացման և ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը Կողմերի կողմից ավարտելու մասին վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ավանդապահի կողմից ստանալու օրվանից, բայց ոչ շուտ, քան Եվրասիական տնտեսական միության մասին 2014 թվականի մայիսի 29-ի Պայմանագրի ուժի մեջ մտնելուն հաջորդող օրը:

Կատարված է 2014 թվականի ----- ք. -----
մեկ բնօրինակից՝ ռուսերեն:

Սույն Պայմանագրի բնօրինակը պահվում է Եվրասիական տնտեսական Հանձնաժողովում, որը, սույն Պայմանագրի ավանդապահը հանդիսանալով, յուրաքանչյուր Կողմին կուղարկի դրա հաստատված պատճենը:

Բելառուսի
Հանրապետության
կողմից՝

Ղազախստանի
Հանրապետության
կողմից՝

Ռուսաստանի
Դաշնության կողմից՝

Հայաստանի
Հանրապետության
կողմից՝